

ԱՌՆԱՐԳԱԳՐԱԿԱՆ

ԱՐՐԱՐՈՒ ՄՈՏԵՆՆԵՐԻ ՀՈՍՏՈՏՈՒ ՄՈՒՆԻ

(Ըրբումի-իմանի)

Հիշում է՝ Արբուլումայի (724—743) կառա-
վարիչ նշանակեց Հայաստանի վերայ Մալումայի Ի.
Արբուլումայիքին, որ՝ իբրև առևտրապահ զօրք՝ ուզ-
արկեց Սայիշ Ի. Ամբ Ի. Ավագ Ալշարաշեն,
նորա Տեա միասին իսահակ Ի. Մուշիմ՝ Օբայլին
եղբայրներով հանդերձ, եւս Ջա՛վանայ Ի. Հարիշ
Ի. Սալիշին (որ Ամիր Ի. Ռարիայ Ի. Սամայի որ-
դին էր), Ջուֆաֆին եւ Սալիշդին, որոնք Օմայր Ի.
Հուբաբ Մուսալիի որդիքն էին, Ալֆուրառ Ի. Սալ-
ման Ալբաշլին եւ Վալիշ Ի. Ալբուլումայի Ալարսին:
Սայիշ ճակատեցաւ խաղաղների հետ, արտաքսեց
նոցա Վարդանակերտից, որ սուք պաշարած էին,
եւ ի փախուստ զարկեց նոցա: Խաղաղք եկան
Մայմազ (սա Առաքատականի գաւառներից մէկն
էր): Երբ Սայիշը կը պատրաստէր կառել նոցա հետ,
նորան հասաւ Մալումայի Ի. Արբուլումայիքի թուղ-
թը, որով նա նորան կը յանդիմանէր, որ՝ նորա
գալութեան շտապեմով՝ պատերազմած էր խաղա-
ղների հետ. սպա նորով կը յայտնէր, որ (փախանակ
նորա) զօրագլուխ է նշականել Արբուլումայիք Ի.
Մուշիմ Օբայլին: Երբ Սայիշ յանձնեց իւր զօրքը
(արան), Մալումայիքի հրեշտակը ձերբակալեց նա-
րան, կապանքների մէջ տարաւ նորան Պարտաւ եւ
գրեց բանտ: Խաղաղքի հետացան, հայաւառած
Մալումայից, որ արքա մտաին գրեց Հիշումին. վեր-
ջինն նորան պատասխանեց՝

Դու կը թողնես նոցա Մայմազում, (թէպէտեւ)
նոցա կը տեսնես,
եւ կը պարեն նոցա անհասառտ հողե վերայ.

եւ հրամայեց հանել բանտից Ալշարաշին: Մա-
լումայ խաղաղութիւն շնորհեց խաղաղանք բնակիչ-
ներին, հրամայեց նոցա ամրոցը քանդել եւ նոյն
տեղ իրան համար ազարակ շինել, որ մինչեւ այսօր
էլ՝ «պատմականող» կը կոչուի: Զարաթի իշխանների
հետ հաշտութիւն հաստատեց, իսկ Ըրբումնաշ, Վի-
րահնաշ, Տարարարանաշ, Ֆրիանաշ, Զար-
անաշ եւ Մալգուայի տերը (ի նշան հնազանդու-
թեան) եկան նորա մօտ: Այգ Մալումայ արշաւեց
Բար (Դրբերք), քաղաքի վերայ եւ նաձեց զայն.
ամրացում նստած էին 1000 առն խաղաղք, որոց
նա պաշարեց, նետելով նոցա վերայ քարեր եւ
քարի ձեւով պարտաւաստ երկաթներ: Երբ այգ
նա շօքեց, նա որիմեց դէպի այն աղբիւր, որան-
դեց Անուշիբում Շուր էր տարած գէպի նոցա լճի
պահարանը: հրամայեց գնդուք եղծել եւ ոչնետել
եւ նոցա կեղծել եւ անգժատի հիւթը՝ աղբիւրի
մէջ նետել. մի դիշերայ ընթացքում լուրք որդ-
նեցաւ, հոտաւ եւ սպանանեցաւ. իսկ երբ գիշը
եղաւ, թշնամիք թողնե ամրոցը եւ փախան: Մա-
լումայ Ի. Արբուլումայիք բնակեցրեց Բար-էլ-աբար
քաղաքում 14.000 զուխ Ասորիքի բնակիչներից,
նշանակելով նոցա ուսմիկ. մինչեւ օրս էլ Բարի

Անոր ծերացած ժամանակի պատկերն է
այս, բարի ու գորովազուլ ծերունւյ մը դէմքը,
սրուն շաքերը սակայն շնն կրտսած երիտասար-
դական վառ աշուստութեան մը ցոլքը:

Յոհնային բժշկական հին պատմութեան մէջ
կարեւոր դէմքն մըն է եւ սա, զոր այսուհետեւ
յարգանքը միշտ պիտի դիտենք Շաշաններու,
Անրիշէնի, Սինապականի, Բարունակի եւ ուրիշ
հին բժիշկներու հետ:

Տեղեկութիւն շունիքը, թէ Սարգիս կար-
պետեան հետամուտ էր բժշկական երկիր ալ գրե-
լաւ, թէ թողած է գրուոր սր եւ է վաստակ. սա-
կայն դիտենք թէ թողած է նա ամենաշնորհ
գաւառակը, որոնք իւր անուան փառք եւ Ազգին
ալ պատիւ եղած են:

Անոր գաւառներուն աղբրանիկն է՝ Ջմու-
նարանի Տիկին Իսաուհի Պարտիզականեան, մայր՝
Պարոյ, Վահան եւ Ռուբին Պարտիզականեան էֆեն-
տիներու, որոնցմէ Երկրորդը՝ Ջմուհիայ Ազգ-
վարչութեան արդի քաղաքական ժողովին Ատե-
նապետն է:

Դր. Սարգիս ունեցած էր մեկ արու գաւակ,
կարպետ Սերջյանի՝ որ ծնուծէ վաճառական
մըն էր Ջմուհիայ մէջ, փեսայ էր Բարեխիշտակ
Յակոբ Սպարթալանի, եւ Ազգային Վարչական
Ժողովներու ալ գործո մասնակցութիւններ ու-
նեցած է. վախճանեցաւ այս տարի Մարտի էֆնի՝
թողովով աղշիկ մը եւ մանջ մը՝ որ իւր բժիշկ հաւ-
ուն անուանակիրն է:

Երրորդ գաւակն է, Տիկին Ատախուհի Գա-
րիբէլ Ճշմարտասեան. իսկ Զարբորը, Տիկին
Բրաբին Ալանեան, իւր հօրը բարեփոխական ու
մարգարտական զգացումներուն հաստատրի՞ ժա-
անաւորը, որ ոչ նուազ կարեւոր ծառայութիւն-
ներ մատուցած է Կ. Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցին,
իրբեւ անդամ այս Հաստատութեան ինստիտու-
թիւններու միութեան: Տիկին Ալանեան ինքն ալ
հասուցած է այնպիսի գաւակներ, որոնք՝ օրինա-
կելի մայրեր եղած են այսօր Եւրոպական կամ
Ամերիկեան մայրաքաղաքներու Հայ գաղութ-
ներուն մէջ:

Բաւական իսկ են արդէն ասոնք, Սարգիս
կարպետեան անունն անմահացնելու. բայց եւս
պիտի ինզրբի, որ՝ Ջմուհիայ Ս. Լուսաւորչեան
Ազգ. Հիւանդանոցին Լոգաբարձութիւնն ալ բա-
րեհամբար արձանագրել զայն Հիւանդանոցին մէջ
անկիւնը, որպէս զի ներկայ եւ ապագայ սերունդ-
ներ ճանչնան Ջմուհիայ անդրանիկ Հայ բժիշկը՝
Դր. Սարգիս Կարպետեան, որ՝ մի դիտու, բժշկա-
կան Բնշ կարեւոր ծառայութիւններ մատուց
Ս. Լուսաւորչեան Հիւանդանոցին, ծառայու-
թիւններ՝ թաղաւած գուցէ եւ անհետացած
հին փառանկներու ներքեւ:

Անրա, 12/26 Դեկտ. 1903:

ՏՅՐԹ. ԱՐՐԱՐՈՒ Ե. ՊՈՒՆՈՒՄԻՆ

1 "Արեւիշտա Մաւան Զմուհիայ, 1Գ. տարի.
Թիւ. 10. 8 Մարտ 1903. էջ 240:"

! Asa foetida, silphium.

բնակիչք այսպես թվյալ շին տախ (նոր) կառավարին քաղաք մասնել, բայց եթէ նա եւր հետ (բերե) գրամ՝ նոցա մէջ բաժանելու համար: Հինեց ուսեղիք եւ զարտ շտեմարաններ, զինասուն, հրամայեց լեցնել լոյս պահարար եւ պայմանցրեց քայքայած քաղաքը: Մատչմայի հետ եր Մըւլմեյս Ի. Մաւմեղ, որ նոցա հետ միասին պատերազմեցաւ Սաղարներ հետ եւ մեծ քաջութիւն ցոյցուցեց ճակատամարտերում:

Հիշած կառավարիչ նշանակեց Մասլամայից յետոյ Մայիգ Ալհարաշին, որ մնաց այստեղ երկու տարի: Նորանից յետոյ կառավարեց Մըւլմեյս Ի. Մաւմեղ, որ բնակեցաւ Արաւլ՝ում: Նա նորոգեց գաւառիս քաղաքը, որ Պարտեւեց 40, իսկ Տիգրիսից 20 փարսախ հեռւ է: Մտնելով յաղարաց երկիրը Ալունացոց գրան կողմից Ատիգ Ի. Չաֆիր Արաւլայի՝ Եղեղի հօր՝ եւ Ջարախի Բարեւ Արաւլայի հետ իշխանաց հետ, Մըւլմեյս յարձակեցաւ Ալունաների վերայ, որոնք յաղարաց երկրում էին, զեղեց նոցանից 10.000 ընտանիք եւ բնակեցեց նոցա Կոնսթնուս: Բայց Ալունանք՝ սպաննելով իրանց կառավարին՝ փախան, եւ Մըւլմեյս, հետամուտ լինելով, սրբ մասնեց նոցա: Երբ եկաւ յաղարաց իշխանը ահաբեկ բազմութեամբ, որ Մըւլմեյս, նաճել էր, թափելով նոցա երկիրը եւ շլատելով նոցա զենքի զօրութիւնը, այս բանը լքացեց նորան եւ երկիրով լեցրեց նորս սիրաւ: Երբ յաղարաց Մըւլմեյսի մտնեցաւ, առ նորան պատգամ ուղարկեց, որ նորան կամ իոյժմ ընդանձնելու եւ կամ կաշի հրախրի: Նա պատասխանեց՝ «ես կընդունեմ իոյժմ, առտոք ուղարկիր ինձ մտ մկկին, որ ինձ ուսուցանե», եւ նա նորան մարդ ուղարկեց, որ առջոց նորան՝ Ազգա Մըւլմեյս՝ զան կապելով նորս հետ՝ նորան իւր սեփութեան վերայ Տաստատելու հիման վերայ, բնակեցրեց նորան յաղարաների հետ միասին Լակիզներէ երկրի տափարակում, Սամսուրի եւ Էլպարանի մէջ:

Պորանից յետոյ Մըւլմեյս մտաւ Սարիք երկիրը, յարձակեցաւ բնակիչների վերայ եւ տիրեց երկրի մոնոններին: Սարիքի իշխանը հպատակեցաւ նորան եւ խաղաղութիւն հաստատեց նորս հետ այն պայմանով, որ նա իւրաքանչիւր տարի 1000 սորուկ՝ 500 պատանի եւ 500 աղախին, սեւ մազեղով եւ յոնքերով՝ նորան մատակարարէ: Եւ նա կորեց նոցա (մազերի) ծայրերը՝ եւս պարսաւորեցաւ 100.000 խաբա՞ (ցորեն) մատակարարել պետական շտեմարանների համար: Մըւլմեյս առաւ նորանից պատանդ: Ցոււմանի՝ բնակչաց հետ եւս խաղաղութիւն հաստատեց այն պայմանով, որ նոցա տարեկան 100 զուլու սորուկ՝ 50 պատանի եւ 50 աղախին սեւ մազեղով եւ յոնքերով՝ (նա կորեց մազերի ծայրերը) եւ 20.000 խաբա՞ (ցորեն) պետական շտեմարանների համար մատակարարեն: Մտնե-

լով Ջերիկիրան երկիրը, Մըւլմեյս հաշտութիւն կապեց երկրի իշխանի հետ այն հիման վերայ, որ նա իւրաքանչիւր տարի 50 զուլու սորուկ եւ 10.000 խաբա՞ (ցորեն) մատակարարէ: Բայց Համազնի բնակիչք զկանախ խաղաղութիւն հաստատել նորս հետ: Մըւլմեյս գրաւեց նոցա ամրոցը մի ամիս պաշարելուց յետոյ, այլեք, աւերեց, իսկ իշխանին պայման դրեց, որ նա 500 զուլու սորուկ մի անգամ տայ: Նորան այլ հնար չկար, եւ (նա համաձայնեցաւ) բացի գորանից տարեկան 3000 խաբա՞ (ցորեն) պետական շտեմարանների համար մատակարարել Ալունանից Մըւլմեյս եկաւ Արիզան (?) եւ նաւանց երկիրը խաղաղութեամբ, պայման զնելով, որ նորս իշխանը մի անգամ 100 զուլու սորուկ նորան մատակարարէ: Աւրիշ հնար չունեալով, նա համաձայնեցաւ բացի այդ տարեկան 6000 խաբա՞ (ցորեն) ուղարկել պետական շտեմարանը: Ցարարատան բնակչաց Մըւլմեյս պարտաւորեցրեց տարեկան 10.000 խաբա՞ մատակարարել, իսկ Ֆրիլանշահի վերայ առեց շրթեց նորս գեղեցիկ երգեցողութեան, գովելի գործի եւ մեծ քաջութեան համար:

Պորանից յետոյ Մըւլմեյս մնաց Լակիզների ամրոցում, որոնք հրժարեցան նորան որ եւ տուրք վճարել: Առաին ապստանից մկկնեցաւ խաղաղաց իշխանի մտ, որին սպաննեց նետով մի հովիւ, առանց նորան ճանաչելու: Մըւլմեյս Լակիզների հետ խաղաղութեամբ կապեց այն պայմանով, որ նորս 20.000 խաբա՞ (ցորեն) մատակարարեն: Կարգելով նոցա վերայ կառավարել յառաժմ ալ Աւալախին, նա մեկնեցաւ Էլպարանի տիրով տնօրոցը, որ ինչի կը կոչուէ եւ ծովին մտ էր: Նա հնուդաւդեցաւ նորան, ինքնելով դաշտային տափարակը: Մըւլմեյս գրեց բնակչաց վերայ 10.000 խաբա՞ տուրք: Հերիւանի տիրով վերայ պարտաւորութիւն դրեց առաջաւոր զնգում գտանել ամեն անգամ, երբ մասիլները արշաւելու լինին յաղարաց երկիրը, իսկ վերադարձին՝ յետապահ զնգում: Ֆրիլանշահ պարտաւոր էր միայն նոցա արշաւանքին մասնակցել: իսկ Ցարարատանը՝ յետապահ զնգում գտանել արշաւելու եւ վերադարձին՝ առաջաւոր զօրքում: Մըւլմեյս եկաւ Ծոռէից երկիրը եւ պատերազմեցաւ բնակչաց հետ:

Երբ նորան հաւառ Ալաիգ Ի. Ալիգի սպանան (744 թ.) լուրը, նորս զեմ պարտակեցաւ Չարիա Ի. Նուէյմ՝ ալ Ջուզամի: Գալով Մուսաֆիր ալ Մաստար մտ (որին Չահալի խարիշականն՝ Բարի (Պերսեդդի) վերայ քաղաքացիութեւ նշանակել), նա գտաւ նորան իրան համապիտաս գրեց Մուսաֆիրին կառավարիչ Հայաստանի եւ Արարատականի վերայ, իսկ ինքն զառոց եկաւ Արտախի: Նորս հետ միացաւ քաղաքի գուհհիկ ժողովուրդը: (պատմաբն) եկան Բաշարան՝ եւ

1 Սովորութիւնս իտրնի հնուիտան կը պատկանի: Նորեհասանեց թագաւոր Համուրաբի (երբ 2250 Ն. Ք.) իւր՝ երբեք գտնուած՝ որինքս զգրուած, ճակատի մազերը կորել տալը նախ պատմիչներից մէկը է համարել:

2 Modius. Սարիքում եւ Երվանդանում հնուիտ գործանքի չափ:

3 Ըլա Istaxri Փայտակարանից 7 փարսախ հեռւ է:

1 Չահահ Ի. Կեւ Ալիգրանի, խարիշականաց զրաւուրը: որ 745 թ. գրաւեց Բաբելոն:

2 խարիշական, որոնք 6 զլիսա որ պարսիների կը բաժանեն, կը նշովն Օսմանին եւ Ալիին եւ որպսպան պարտաւորութիւն կը համարեն ապստամբել ընդհանուր իմամ զեմ:

3 Ըլա Istaxri քաղաք կը գտանուէր Էրուսանից ոչ հեռւ:

գտան իրանց համախոսներ, որոնք միացան նոցա հետ, նոյնպէս եւ վարդանակերտում շատերը. նոյնը տեղի ունեցաւ, երբ սպատանքը անցան Փայտակարան: Ապա Մուսափէր մնաց Յուսանում:

Մըբլան Ի. Մասնէք նշանակեց իսահակ Ի. Մուսլիմին կառավարել Հայաստանի վերայ, իսկ ինքն շարունակեց իւր մտադր Մուսափէրի հետ, որ (ամբայցած) եր Ախականի կիւրք աւել բոցում:

Երբ փոխեցում հարստութիւնն եւ Սաֆֆահ արոււ Աբբաս (749—754) ամբարպետ եղաւ, Մի. Ջաֆարն եւ Հայաստանի վերայ կառավարեց Աբու. Ջաֆար ալ Մանուսը. նա ուղարկեց Նորասանից Մուսափէրի եւ նորա համախոսների գէմ զորապետներէի մէկէից, որ ճակատեցաւ ապստամբների հետ, յաղթեց նոցա եւ սպանեց Մուսափէրին, Փայտակարանի ընակիչք ամբայցան կիւրք ամբայցում զորապետ ֆիդալ Ի. Ասֆար Փայտակարանցաւ հետ, թայց ստիպեցան վայր իջանել՝ իրանց կեանքը ինայելու պայմանով:

Երբ Մանուսը ամբարպետ եղաւ (754—775), նա կարգեց Եղեզ Ի. Ուսայք Մուսլիմին Հայաստանի վերայ կառավարել, որ նուսանց Ալանացոց գուուը, զրեց այնտեղ մի գունչ հեծելազօր դիւանի՝ Վարդկանցից, հարակիցրեց Կասանուների եւ ստիպեց նոցա Տապ վճարել: Ապա Մանուսը հրամանով եղեզ ազգականացնաւ խաղարաց թագաւորի հետ. կինը ծնեց նորան մի որդի, որ վաճաճեցաւ, նոյնպէս եւ մայրը ծնունդէք ժամանակ: Մանուսը ուղարկեց Եղեզին Հերուան երկիրը, որ ուներ նափոխի եւ աղի հանքեր, եւ զրեց այն նորա իշխանութեան ներքոյ: Եղեզ շնեց Արթէլ՝ մեծ եւ փոքր՝ քաղաքներ եւ բնակեցրեց այնտեղ Պաղեստինի ժողովրդից:

Ինձ պատմել Ե Մասնէք Ի. Իսմայիլ Պարտաւի բողոք ծերերի ստելով, թէ Հերուան գաւառի Էամուխի (քաղաքը) իւր անունն կը սերէ Էամուխ Ի. Էուզաբից, որ Հերուանի իշխան էր՝ Սայիդ Ի. Սալմ ալ Բահլիին ի Հայոյ կառավարելու ժամանակ, ինձ աւանդել Ե Մասնէք Ի. Իսմայիլ ծերերի զրուցելով, թէ Հայերը ապստամբեցան Հասան Ի. Բահլիարայ Ալթիայի կառավարութեան ժամանակ (Ի. Ուսայք եւ Բակկար Ի Մուսլիմ՝ Օքայլի հեռանալուց յետոյ) հոյ Մուշեղն (موشعل) առաջնորդութեամբ. ալ Մանուսը ուղարկեց Հասանին օգնական զօրք Սիր Ի. Իսմայիլի հրամանատարութեան ներքոյ: Հասան հրահանեցաւ Մուշեղն հետ, սպանեց նորան, նորա բազմութիւնը ջրեցաւ, եւ բարեկարգեցաւ երկիրը: Այս Հասանի անւամբ կոչուած են Փայտակարանի Հասան գետը, Պարտաւի Հասան այգին եւ Հասանիայ ագարակը:

Հասան Ի Բահլիարից յետոյ կառավարեցին հերթով Օաման Ի. Օմարայ Ի. Խուրայմ, Ռափհ Ի. Հատիմ Մուհամադի, Խուզայմայ Ի. Խալիմ, Եղեզ Ի. Մադիազ ալ Հայրանի, Օրայ-

1 Այսպէս կը կոչուին զինուորներ, որոց անուններն մատենի մէջ կը ստացուցարձ եւ որոնք մշակման առիթի կը ստանային:

գալլահ Ի. Մահդի, Ֆարլ Ի. Եահնայ, Սայիդ Ի. Սալմ, Մահմադ Ի. Եղեզ Ի. Մադիազ: Խուզայմայի կառավարութիւնն ծանր էր. նա հաստատեց Գուրնում եւ Կանիշլեանում երկրաշարժ, որ նորանից առաջ (այստեղ) գոյութիւն չուներ:

Հայաստանի իշխանը նստած էին իրանց երկրներում եւ նոցանից աննն մէկ կը զայրապաներ իւր գաւառը. երբ այստեղ կը գալէս ամիրապետի ստիպանք, նոցա կը շնային նորա սերը գրաւել եւ, եթէ նա նոցա հետ ազնիւ, թայց խիստ կը վարէր, նոցա նորան հարկ կը վճարէին, հակառակ դէպքում՝ նորան հրապարտօրէն կը հայհոյէին եւ կ'արհամարէին նորա հրամանն: Մամունի (813—833) ամիրապետութեան ժամանակ կառավարեց Խալիդ Ի. Եղեզ Ի. Մուշեազ, որ կ'ընդունէր նոցանից ընծաներ եւ նոցա հետ բարեկամար կը վարէր. թայց նորա այս վարմունքն նոցա վառթարեցրեց եւ զբռնեց Մամունի նշանակած նորա փոխանորդներն գէմ:

Ամուստափ՝ Բիլլահի (833—842) զրեց Հասան Ի. Ալի Բազադիսին, որ յայտնի էր Մամունի Բիլլան անւամբ, այստեղ կառավարել. նա անփոյթ գաւառեցաւ երկիւր եւ նորա իշխանների վերաբերմամբ, որոց հետ նա մեղմ կը վարէր, մինչեւ որ զօրացաւ նոցա ամբարտաւթիւնն զէպի սուլթանն եւ շարութիւնն կառավարիչների գէմ. Իահահակ Ի. Իսմայիլ Ի. Էուսայ, ըանի Ամուսայի արձակուած սորուկը, նուսանց Ալիքը, իշխան Սահլ Ի. Սթաւա յարձակեցաւ Հայրաբ Ի. կառու Օթլինի՝ Հայաստանի կառավարել՝ վերայ եւ սպանեց նորա քարտուղարին, որ փնչեց հոգին: Ապա այստեղ կառավարեցին ստիպանք, որոնք կ'ընդունէին երկրի բնակիչներից նոցա աւելորդ ինչքը եւ կը բաւականանային նոցա զլիւսահարկի մասնով յարմար գէղաքում:

Հուստացողից ամիրապետ Ամուստափկիլիլ ալ-Ալլահ (847—861) իւր խալիֆութեան երկրորդ տարին կարգեց Հայաստանի վերայ Խուսուփ Ի. Մահմադ Ի. Խուսուփ Ալմարվաղին, որ՝ գալով իսլամ՝ ձերբակալեց տեղի իշխան Բազարա Ի. Աշուփն եւ ստորաւ նորան Սամաույ. այն ժամանակ թափուր մնաց երկիրը իւր իշխաններից, ապստամբներից եւ մեծամեծներից:

Իսկ Խուսուփի օգնականն՝ Ալայ Ի. Ահմադ՝ զինեց Ախականի վանքն, որ յայտնի է Բաժմակոց վանք անւամբ եւ որ Հայաստանի բնակիչներից միշտ պատուած է եւ ուխտատեղի ծառայած: Ալայ սպիտակեց նորա բոլոր ինչքը եւ սկսեց նեղել իշխաններին. սոքա՝ տեսնելով իրանց անտանելի եւ ստիպեց գրութիւնն՝ սկսեցին գրառար կերպով հաղորդուցիլ միմեանց հետ, մէկը միւսին զբռնելով անհարգանքութեան եւ սպառամբութեան: Գաղա մարդիկ ուղարկեցան խալիֆեցիների՝ մտա (սոքա ինչնուսուս՝ անւամբ յայտնի բարբարոսներ են), որոնք զբռնեցին նոցա Խուսուփի վերայ յար-

1 Բնագրի ۱۰۰۰۰۰۰۰ հարկու սեւալ է: 2 Հմտ. Բաժմ Արթուսի Կ... եւ յաղաքս իրթնի եւ անհաստատել իսպիցն եւ բարոցն կոյնն (բաւկիք լիւրն) իս-Ե. Ա. Ե.):

ձուկէլ, որովհետեւ նա կը տաներ իւր հետ նոցա իշխան Բազարտին. երկրի իշխաններէց եւ մեծամեծներէց իւրաքանչիւր ուղարկեց հնծեկազոր եւ հետեւող զբազանց նոցա օգնութեան: Խուժեցիչ յարակեցան Խուսփի վերայ Տարծուս, մինչ նորա մարդիկ ջրած էին գիւղերում, սպանեցին նորան եւ յափշտակեցին նորա ամբողջ բունակը:

Հաւատացելոց ամբողջութեամբ Ամուստավիկէլ ապա կարգեց Հայաստանի վերայ կառավարիչ Բուզայ մեծին. սա եկաւ Բիթլիս եւ հերթակալեց Մուսայ Ի. Զուբարին: որին հաճոյ կը Խուսփի սպանումն եւ որ՝ պահելով Բազարտի կողմն՝ օգնած էր այս իրազօրեւէլ. Բուզայ պատերազմեցաւ Խուժեցոց հետ, որի մասնեց եւ գերեց նոցանից մեծ բազմութիւն: Ապա պաշարեց Աշտու. Համ. զայ Ի. Գազիկ Ասազուրականի իշխանին, ստիպեց նորան վախ իջանել իւր ամրոցից եւ տարաւ նորան Սամաույ:

Բուզայ տրչուեց Ախր, յաղթեց Իսահակ Ի. Իոմայլին եւ սպաննել աւեց նորան կապանքների մէջ՝ Կաւանջով Ախր նա (այնպէս) փոխադրեց Ազուանից բնակիչներէց: Ահհասարակ խաղաղացրեց Սիւսիանի Հայերին՝ կապտամբ, խուժարաբար բրիտանականներն եւ այլոց, մինչեւ որ բնակարգեցաւ երկիրը արգարութեամբ, որ իբան նմանք չունէր: Ապա մեկնեցաւ Սամաույ 241 թ.

Վերջ Ա մասին:

Բ. ԽԱԱԹԵՆԱՅ



Մ Ա Ց Ե Ն Ա Ռ Օ Ս Ա Կ Ա Ն

« 1868 »

Պատկերազարդ Օրացոյց Հանդէս 1904, Ծ. Թոփչեան սպ. Թիֆլիս 1903:

Շատ չեն հայերէն լեզուա հրատարակուած Օրացոյցները եւ այս քանի մը հատին հրատարակիչներն ալ փոխանակ ընտիր, շահաւէտ եւ ժողովրդեան մտաւոր զարգացման ծառայող նիւթերով անոնց սակաւաթուութեան տեղն ըստ իմիջ լեցնելու, « Իրանց հրատարակութիւններէ միջոցով տարածում են ժողովրդի մէջ այնպիսի նիւթեր, որոնք ամենայն իրաւամբ կարող են մտաւոր բարոյական թոյն համարուել... կարծես նպատակ են գրել՝ ագիտութեան աւելի թանձր քօրով ծածկել միամիտ ժողովրդի մտաւոր հզօրացնել եւ սխտեմատիկ կերպով ամրացնել նրա մտտիպաշտութիւնը, նախապաշարմունքն ու կուլտուրական յետաձայնութիւնը:» Այս խօսքերով Ե. Թոփչեան իւր « 127 » պատկերազարդ Օրացոյցին մէջ ուրիշ Օրացոյց հրատարակողաց դէմ բողոքելէն վերջը՝ կը յայտնէ թէ ժողովրդեան այս խեղճ

վիճակին զարման տանելու համար է, որ ինքը՝ շատ մը գրագէտ ու մասնագէտ անձանց աջակցութեամբը՝ ձեռք զարկաւ իւր « 127 », սեղանի, պատի եւ գրպանի Օրացոյցներն հրատարակել: « Որոնք բուն նպատակն է գիտութեան լըս ստիւթ ժողովրդի խաւար խաւերում, օգտակար ու անհրաժեշտ գիտելիքն տարածել հասարակութեան լայն շրջաններում եւ ընթերցանութեան նիւթ մատակարարել...»

Թոփչեանին « 1868 » տեղակ Օրացոյցը (որուն վրայ է մեր մատենախօսականը) ստուգիչ իւր գիտած նպատակին համեմտ ամէն առաւելութիւններով ու յստիկութիւններով օժտուած է. այնպէս որ եւրոպական այս կարգի օրացոյցներէն վար չէ մնար: — « 127 » Օրացոյցը երկսիւն 500 էջ ընդարձակ մասեան մըն է, մաքուր թղթի վրայ եւ գեղեցիկ առաւելով տպուած: Միայն թէ գրի եւ թուանշանի սխալները բազմաթիւ են: Այս վերջիններուն շարուածքին ամենեւին մտադրութիւն չէ եղած. մէկը վեր, միւսը վար, հաստ ու բարակ մեծ ու պղտիկ թուանշաններ քովէ քով շարուած են, որով գրքին ագեղութիւն մը կը պատճառեն: Սակայն ամոնք գրքին մեծամեծ բարեմասնութեանց քով եւ ոչ իսկ նկատի կ'առնուին. Թոփչեան իրեն Օրացոյցին մէջ միայն այնպիսի անձինք աշխատակից ընտրած է, որոնց անունը հայ նշանաւոր գրագիտաց կամ մասնագիտաց կարգը դատուած է: Անոնցմէ յիշենք հետեւեալները՝ իրենց վրած յօդուածներուն կարգաւ. Պերճ՝ Պօռչեանց, Վարդօ, Հ. Առաքելեան, Բժ. Ա. Բուգուղեան, Բժ. Վ. Արծրունի, Գ. Կո. Փաշայեան, Տիկ. Հրանդշ, Ա. Ահարոնեան, Յովհ. Թուամանեանց, Ա. Զօպանեան, Աշ. Յատուրեան, Ա. Իսահակեան, Ղ. Ալալայեան, Ստ. Մայիսանեանց, Լէօ. Ե. Թոփչեանին « 127 », Օրացոյցին ուրիշ մէկ առաւելութիւնն ալ է դոփիւրբը բլլալը: Քանի մը փոքր պատկերները զանց ընելով յիշելք հետեւեալները. Ղիկողայոս Բ. կայսր Ռուսաց, Ախալցխացի, Շամսխեցի հայ տիկնայք եւ Ղազարխեցի հայ սար: Յուզուած ծովը, քանի մը քաղաքներու տեսարանները, Բաֆֆի, Տիկ. Սիւրանոյշի եւ ուրիշ քանի մ'անձանց պատկերներ: Գրքին ետեւը չորս հաստ թղթի վրայ գունասիպ Վ պատկերներ տպուած են: Ահա այս է « 127 » տեղակ Օրացոյցն ընդհանուր պատկերը, տեսնեք այժմ թէ ինչ նիւթեր զետեղուած են մէջը, որմէ գրքին արժէքը առաւել եւս պիտի երևայ: